



* Գ. 1 Մարտ.— Երեկոյեան, Ս. Հրեշտակապետաց եկեղեցին մէջ կատարուեցաւ Մեծ Պահոց «Եկեսցէ»ի առաջին ժամերգութիւնը: Արարողութեան նախադաշնեց եւ ասլաշխարութեան խորհուրդին շուրջ հակիրճ քարոզ մը խօսեցաւ Վանքի Տեսուչը՝ Հոգչ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան:

* Ե. 3 Մարտ.— Երեկոյեան, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուած Հոկման արարողութեան նախադաշնեց եւ քարոզեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպու. Գարիկեան, խօսելով պահեցողութեան ըմբռնումին եւ կարեւորութեան շուրջ:

* Շր. 5 Մարտ.— Ս. Կիւրդի Երուսաղիմայ հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Կիւրդի սեղանին վրայ, որուն տակ ցոյց կը տրուի այն աւազանը, ուր, ըստ աւանդութեան, Ս. Կիւրեղ Երուսաղմացի հայրապետը բազմաթիւ նորադարձներ մկրտած է Ս. Խաչի լուսաւոր Երեւման օրը, 351 թուին: Ժամարարն էր Հոգչ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

* Կիր. 6 Մարտ.— Անառակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցին մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Հայկազուն Արդ. Մելոնեան: Քարոզեց Հոգչ. Տ. Հայկասեր Վարդապետ, մեկնարանելով Անառակի աւետարանական առակը:

* Գ. 8 Մարտ.— Իրիկուան Հսկումին ի Ս. Հրեշտակապետ իր առաջին քարոզը խօսեցաւ Հոգչ. Տ. Ռուրէն Արդ. Յովակիմեան, բացարելով անհատական եւ հաւաքական ազօթքներու յարակցութիւնն ու անհրաժեշտութիւնը, անձնիւր քրիստոնեայ անհատին համար:

* Ե. 10 Մարտ.— Իրիկուան Հսկումին ի Ս. Յակոբ քարոզեց Հոգչ. Տ. Սեւան Վարդապետ, չեշտելով մեր մեղքերուն անդրադապնալու եւ դիտակից զբդջումով անոնցմէ հրաժարելու կարեւորութիւնը:

* Շր. 12 Մարտ.— Ս. Յովհաննու Երուսաղիմայ հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգչ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան:

* Կիր. 13 Մարտ.— Տնտեսին : Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնի խորանին վրայ : Ժամարարն էր Հոգչ . Տ . Ասպետ Արդ . Պալեան :

* Գշ. 15 Մարտ.— Իրիկուան Հսկումին ի Ս . Հրեշտակապետ քարողեց Հոգչ . Տ . Անեան Վարդապետ , ներողամտութեան զգացումին շուրջ :

* Եշ. 17 Մարտ.— Իրիկուան Հսկումին ի Ս . Յակոբ նախադահեց եւ քարողեց Գերշ . Տ . Շահէ Արքեպս . Ամէմեան , բարոյական դասեր հանելով Յովհաննու Աւետարանի 9րդ գլխուն մէջ յիշուած ի ծնէ կոյրի բժշկութեան դրուագէն :

* Ուր. 18 Մարտ.— Կէսօրէ ետք , վաղուան 40 Մանկանց տօնին առիթով , Ս . Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ կատարուեցաւ «Խաղաղական» ժամերգութիւն , իսկ զիշերասկիզբին՝ Հսկման արարողութիւն , որուն նախադահեց եւ քարողեց Հոգչ . Տ . Հայկասեր Վարդապետ՝ «Եւ լիձն Սերաստիոյ եղեւ երկրորդ Յորդանան , իջմամբ Արդւոյն Աստուծոյ» բնարանով : Ներկայ հաւատացեալները իրենց բարեկամաշտական զգացումները արտայայտեցին սուրբերու նըկարին առջև շինուած շարժական սեղանին դիմաց մոմավառութեամբ եւ ձեթի նուիրաբերութեամբ :

* Շր. 19 Մարտ.— Ս. Քառասուն Մանկանցն Սերաստիոյ : Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր : Ժամարարն էր Հոգչ . Տ . Գեղարդ Արդ . Տաւուլարիան :

— Վաղուան Դատաւորի Կիրակիի առթիւ , կէսօրէ ետք ժամը 2.30ին , Ամեն . Պատրիարք Ս . Զօր գլխաւորութեամբ , Միարանութիւնը «Հրաշափառով» մուտք գործեց Ս . Յարութեան Տաճար : Պատանատեղիի եւ Ս . Գերեզմանի ուխտերէն ետք , թափօրը իջաւ Գիւտ Խաչի այրը եւ յետոյ բարձրանալով Ս . Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին կատարեց երեկոյեան ժամերգութիւն եւ նախատօնակ : Ասպա կատարուեցաւ Տնօրինական սրբավայրերու այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս : Թափօրապետն էր Հոգչ . Տ . Ասպետ Արդ . Պալեան :

* Կիր. 20 Մարտ.— Դատաւորին : Գիշերային եւ առաւտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս . Լուսաւորիչ եկեղեցիին մէջ : Ասպա , Ամեն . Պատրիարք Ս . Հայրը Հանդիսաւոր Ս . Պատարագ մատոյց Քրիստոսի Ս . Գերեզմանին վրայ , որմէ ետք նախադահեց նոյնին եւ Պատանատեղիին շուրջ կատարուած երբադարձ մեծահանդէս թափօրին :

* Գշ. 22 Մարտ.— Իրիկուան Հսկումին ի Ս . Հրեշտակապետ քարողեց Հոգչ . Տ . Նուրէան Վրդ . Մանուկեան , բնարան ունենալով «Տէր , ուսո՛ մեզ կալ յաղօթս» : Խօսեցաւ աղօթքի անհրաժեշտութեան մասին իբրեւ հաղորդակցութեան կազմ մը ընդմէջ Արարէին եւ արարածներուն :

* Եշ. 24 Մարտ.— Իրիկուան Հսկումին ի Ս . Յակոբ նախադահեց եւ քարողեց Գերշ . Տ . Կիւրեղ Եպս . Գարիկեան , մեկնարաննելով Ղուկասու Աւետարանին մէջ յիշուած Անպտուղ թզենիի առակը :

* Ուր. 25 Մարտ.— Նախատօնակին ի Ս . Յակոբ նախադահեց Գերշ . Տ . Շահէ Արքեպս . Ամէմեան :

* Շր. 26 Մարտ.— Ս. Գրիգորի Լուսաւորչին (Մուտն ի Վիրապ) : Բատ սովորութեան , առաւտեան ժամերգութեան աւարտին , Ս . Լուսաւորչի մասունքը իր հանդսարանէն թափօրով փոխադրուեցաւ Աւագ Սեղան՝ ձեռամբ Գերշ .

Տ. Շահէ Արքեպիսկոպոսի : Ա. Պատարագը մատուցուեցաւ աւանդատան Ա. Լուսաւորչի սեղանին վրայ : Ժամաբարն էր Հոգ : Տ. Թուրէն Արդ . Յովակիմ- ևան : Գերշ . Տ. Շահէ Արքեպիսկոպուս . կատարեց սարկաւագական ձեռնադրութիւնը Բնծայաբանի ուսանողներ Տրց . Ախմոն Պալեանի , Տրց . Յարութիւն Անուշեանի և Տրց . Սարգիս Մանկասարեանի :

— Կէորէ հտք ժամը 3ին, Գերշ. Տ. Կիւրեղ Եպօ. Գարիկնանի դլխաւորութեամբ, Միարան Հայրեր ինքնաշարժներով բարձրացան Զիթենեաց լեռ, ուր Համբարձման սրբավայրին վրայ կառուցաւած մեր վրանամատուին մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատօնակ: Խոկ զիշերասկիզբին, նոյն վայրին մէջ պաշտուեցան «Եկեսցէ»ի և Հոկման արարողութիւններ, ինչպէս նաև զիշերային և առաւտեան ժամերգութիւններ: Մատուցուեցաւ նաև Ս. Պատարագ՝ Համբարձման մատուին մէջ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, սրբավայրին Տեսուչը՝ Հոգէ. Տ. Աւեան վրդ. Դարիկեան:

* Կիբ. 27 Մարտ — Գալստեան : Առաւտուեան ժամը 8ին, Գերչ. Տ. Շահէ Արքեապո. Աճէմեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժներով բարձրացաւ Զիթենեաց լեռ, ու «Հարաշափառ»ով մուտք գործեց Համբարձման սրբատեղին, ուր մեր վրանամատուին մէջ եպիսկոպոսական խոյր ի զլուխ պատարագեց Հոգէ. Տ. Գէրդ Վրդ. Նազարեան :

* Գ. 29 Մարտ — Ա. Հրեշտակապետաց եկեղեցին մէջ պաշտուած Հսկումին քարոզեց Հոգ. Տ. Հայկանոր Վարդապետ, բնարան ունենալով «Համբարձի զաւ իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն»: Խոսեցաւ Սինա, Թարոր և Գողգոթա լեռներու վրայ կատարուած աստուածային յարտնութիւններու նշանակութեան մասին:

* Եշ. 31 Մարտ — Երեկոյեան, Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Մեծ Պահոց «Եկեղէ»ի վերջին ժամերգութիւնը։ Արարողութեան նախապահէց եւ քարոզեց Գերշ. Տ. Ճահէ Արքեպիսկոպոս։ Անդքաղաքարձաւ Ղազարոսի յարութեան դէպքին եւ անկատար գտաւ հաւատքը անոր քրոջ՝ Մարիամին, որովհետեւ ան չէր հաւատացած թէ Փրկիչը կարող էր յարութիւն տալ իր եղբօր։